ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/94

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.06.2018թ. թիվ 03/26-3/11426-18 գրությամբ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) 21.06.2018թ. թիվ 922-18 գրության հիման վրա, 25.06.2018թ. թիվ 03/26-3/11426-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/94 ընթացակարգի շրջանակներում 28.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերությունը չի խախտել պայմանագրով սահմանված որևէ պարտավորություն և պատվիրատուն անհիմն է մերժել պայմանագիրը: Մասնավորապես՝ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրն ի սկզբանե կազմված է եղել խախտումներով, այն անորոշ էր: Ընկերության կողմից առաջարկվել է հստակ տեխնիկական բնութագիր, որն ընդունվել է Պատվիրատուի կողմից: Պատվիրատուն պահանջել է 10 կգ տոներ, սակայն պայմանագրով նախատեսված է եղել 2 հատ 10 կգ տոներ փաթեթավորված ստվարաթղթե տուփի մեջ, ուստի Ընկերությունը ստիպված է եղել բացել արկղը և Պատվիրատուին մատարակարարել 10 կգ տոներ՝ պոլիէթիլենային տոպրակով, որի վրա նշում չի եղել: Միևնույն ժամանակ պիտակավորումն եղել է արկղի վրա՝ կոդի տեսքով: Պատվիրատուն հնարավորություն չի տվել Ընկերությանը գալ և պիտակավորել 10 կգ տոների պոլիէթիլենային տոպրակը: Դրա հետ մեկտեղ Պատվիրատուն լուծել է պայմանագիրը և նյութերը ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարությանը: Բացի այդ պայմանագրով նախատեսված է եղել, որ 140 կգ տոները պետք է մատակարարվի պայմանագիրը կնքելուց հետո 20 օրվա ընթացքում՝ ըստ Պատվիրատուի ներկայացրած հայտերի, մինչդեռ Պատվիրատուն ներկայացրել է միայն 20 կգ տոների հայտ:

3. **««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.06.2018թ. թիվ 922-18

գրությամբ հայտնել է, որ որ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝«Նորք» կենտրոն) և «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի միջև սույն թվականի մայիսի 21-ին կնքված N «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/6/5» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 2 անվանում ապրանք՝ փոշի տոներներ: Պատասխանատու ստորաբաժանման եզրակացության համաձայն մատակարարված ապրանքները չեն ընդունվել տեխնիկական բնութագրերին անհամապատասխանության պատճառով, այն է՝ մատակարարված ապրանքի փաթեթավորման վրա բացակայում է ապրանքի անվանումը, չկա նշում պարունակության նպատակի և կիրառության մասին: Բացակայում են նաև ապրանքի քաշի և արտադրող կազմակերպության մասին նշումները, որոնք առկա են Պայմանագրի հավելված 1-ում:

Հունիսի 13-ին «Նորք» կենտրոնը «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին ծանուցել է թերությունների մասին, և հունիսի 19-ին ստացել է գրություն՝ ծանուցմամբ ներկայացված անհամապատասխանութունը «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի կողմից ոչ հիմնավոր գնահատելու մասին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի «ա» ենթակետը՝ «Նորք» կենտրոնը 2018թ. հունիսի 21-ից միակողմանի լրիվ լուծել է Պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/94 ընթացակարգի շրջանակներում 28.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/94 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/94 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի և «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի միջև 21.05.2018թ. կնքվել է ապրանքների մատակարարման «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/6/5» ծածկագրով գնման պայմանագիր:

2. Պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել՝

N	Անվանումը և ապրանքային նշանը	Արտադրողը և ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը
1	Փոշի տոներ Xerox և Lexmark տպիչների համար (ունիվերսալ) GM	Իսգոու Ինդուստրիալ ՁԺՀ	Փոշի տոներ Xerox 3117/3220/3124/120i և Lexmark X264, X363 տպիչների քարթրիջների համար նախատեսված, 10 կգ-ոց պոլիէթիլենե տոպրակներով գործարանային փաթեթավորմամբ՝ 2-ական դրված ստվարաթղթե արկղերի մեջ	կգ	40
2	Փոշի տոներ HP և Canon տպիչների համար (ունիվերսալ) GM	Իսգոու Ինդուստրիալ ՁԺՀ	Փոշի տոներ HP 1010, 1020, 1018, 3015, 1100, 2200 և Canon 6670, 6300, 6140, 3015 տպիչների համար նախատեսված, 10 կգ-ոց պոլիէթիլենե տոպրակներով գործարանային փաթեթավորմամբ՝ 2-ական դրված ստվարաթղթե արկղերի մեջ բարձր ոկակի	կգ	100

Ապրանքները պետք է լինեն գործարանային փաթեթավորմամբ, չօգտագործված:

Գնման առարկայի մատակարարումը կատարվելու է Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում (ըստ պատվիրատուի փաստացի պատվերի):

3. Պատվիրատուն 01.06.2018թ. էլեկտրոնային եղանակով պատվեր է ներկայացրել «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին՝ խնդրելով մատակարարել.

Ապրանքի անվանում	Չափման միավորը	պատվեր
Փոշի տոներ Xerox և Lexmark տպիչների համար (ունիվերսալ)	կգ	10
Փոշի տոներ HP և Canon տպիչների համար (ունիվերսալ) GM	կգ	10

4. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 13.06.2018թ. տրվել է բացասական եզրակացություն, որով արձանագրվել է, որ ըստ Պայմանագրի ապրանքը պետք է մատակարարվեր գործարանային փաթեթավորմամբ, սակայն մատակարարվել է նշված կետի խախտմամբ: Ինչպես նաև բացակայում է արտադրողի՝ ըստ ծագման երկրի անվանումը և մեկի քաշը:

Եզրակացությունը Պատվիրատուի կողմից 13.06.2018թ. ուղարկվել է Ընկերությանը և առաջարկվել է եռօրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

5. ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին ուղղված 19.06.2018թ. թիվ 38 գրությամբ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն հայտնել է, որ պատասխանատու ստորաբաժանման 13.08.2018թ. եզրակացությամբ նշված անհամապատասխանությունները հիմնավոր չեն, իսկ լրացուցիչ պահանջները չեն բխում պայմանագրի տեխնիկական բնութագրից և Պատվիրատուի գործողությունների արդյունք են, ուստի առաջարկել է հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց:

6. «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին ուղղված 21.06.2018թ. թիվ Ե923-18 գրությամբ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի «ա» ենթակետը Պատվիրատուն 21.06.2018թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.06.2018թ. թիվ 03/26-3/11426-18 գրությունը, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 21.06.2018թ. թիվ 922-18 և կից փաստաթղթերը, «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 405-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի և «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի միջև 21.05.2018թ. կնքվել է ապրանքների մատակարարման «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/6/5» ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ վաճառողը («Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ) պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին («Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ) մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել.

N	Անվանումը և ապրանքային նշանը	Արտադրողը և ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը
1	Փոշի տոներ Xerox և Lexmark տպիչների համար (ունիվերսալ) GM	Իսգոու Ինդուստրիալ ՉԺՀ	Փոշի տոներ Xerox 3117/3220/3124/120i և Lexmark X264, X363 տպիչների քարթրիջների համար նախատեսված, ***10 կգ-ոց պոլիէթիլենե***	կգ	40

			տոպրակներով գործարանային փաթեթավորմամբ՝ 2-ական դրված սփվարաթղթե արկղերի մեջ		
2	Փոշի տոներ HP և Canon տպիչների համար (ունիվերսալ) GM	Իսգոու Ինդուստրիալ ՉԺՀ	Փոշի տոներ HP 1010, 1020, 1018, 3015, 1100, 2200 և Canon 6670, 6300, 6140, 3015 տպիչների համար նախատեսված, ***10 կգ-ոց պոլիէթիլենե տոպրակներով գործարանային փաթեթավորմամբ՝ 2-ական դրված սփվարաթղթե արկղերի մեջ,*** բարձր ոկակի	կգ	100

Ապրանքները պետք է լինեն գործարանային փաթեթավորմամբ, չօգտագործված:

Գնման առարկայի մատակարարումը կատարվելու է Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում (ըստ պատվիրատուի փաստացի պատվերի):

Պատվիրատուն 01.06.2018թ. էլեկտրոնային եղանակով պատվեր է ներկայացրել «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին՝ խնդրելով մատակարարել.

Ապրանքի անվանում	Չափման միավորը	պատվեր
Փոշի տոներ Xerox և Lexmark տպիչների համար (ունիվերսալ)	կգ	10
Փոշի տոներ HP և Canon տպիչների համար (ունիվերսալ) GM	կգ	10

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 13.06.2018թ. տրվել է բացասական եզրակացություն, որով արձանագրվել է, որ ըստ Պայմանագրի ապրանքը պետք է մատակարարվեր գործարանային փաթեթավորմամբ, սակայն մատակարարվել է նշված կետի խախտմամբ: Ինչպես նաև բացակայում է արտադրողի՝ ըստ ծագման երկրի անվանումը և մեկի քաշը:

Վերոհիշյալ եզրակացությունը Պատվիրատուի կողմից 13.06.2018թ. ուղարկվել է Ընկերությանը և առաջարկվել է եռօրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին ուղղված 19.06.2018թ. թիվ 38 գրությամբ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին հայտնել է, որ ապրանքը գործարանային փաթեթավորմամբ է և որպես հիմնավորում Ընկերությունը Պատվիրատուին առաջարկել է ուսումնասիրել ինտերնետ տարածքում առկա արտադրող գործարանների կողմից վաճառքի համար առաջարկվող փոշիների 10 կգ-անոց փաթեթավորումները, որոնք հիմնականում լինում են պոլիէթիլենային տոպրակներով (կան իհարկե տակառատիպ տարաներով և գունավոր՝ մետաղագույն պոլիէթիլենային տոպրակներով):

Ինչ վերաբերում է պոլիէթիլենային տոպրակների վրա ըստ ծագման երկրի արտադրողի անվանումը և փաթեթի քաշը չերևալուն, Ընկերությունը նշել է, որ Պայմանագրի տեխնիկական բնութագրի համաձայն ապրանքը փաթեթավորված է 20 կգ-ոց արկղերով (յուրաքանչյուրում 2 հատ 10 կգ-ոց տոպրակ) և պահանջվող տեղեկությունները առկա են եղել արկղերի վրա, իսկ Պատվիրատուի 01.06.2018թ. էլեկտրոնային հայտի համաձայն պահանջ է եղել մատակարարել 10-ական կգ, ինչի պատճառով արկղերը բացվել են և մատակարարվել են առանց պիտակների:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Պայմանագրի տեխնիկական բնութագրով չկա պահանջ, համաձայն որի պոլիէթիլենային տոպրակների և (կամ) արկղերի վրա պետք է նշված լիներ քաշը և արտադրողի՝ ըստ ծագման երկրի անվանումը:

Ընկերությունը Պատվիրատուին առաջարկել է կշռել մատակարարված փոշիների փաթեթները՝ քաշի ճշտման համար:

Ընկերությունը հայտնել է, որ պատասխանատու ստորաբաժանման 13.08.2018թ. եզրակացությամբ նշված անհամապատասխանությունները հիմնավոր չեն, իսկ լրացուցիչ պահանջները չեն բխում պայմանագրի տեխնիկական բնութագրից և Պատվիրատուի գործողությունների արդյունք են, ուստի առաջարկել է հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց:

«Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին ուղղված 21.06.2018թ. թիվ Ե923-18 գրությամբ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը

հայտնել է, որ Պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից մատակարարվել է 2 անվանում ապրանք՝ փոշի տոներներ: Պատասխանատու ստորաբաժանման եզրակացության համաձայն մատակարարված ապրանքները չեն ընդունվել տեխնիկական բնութագրերին անհամապատասխանության պատճառով, այն է՝ մատակարարված ապրանքի փաթեթավորման վրա բացակայում է ապրանքի անվանումը, չկա նշում պարունակության նպատակի և կիրառության մասին: Բացակայում են նաև ապրանքի քաշի և արտադրող կազմակերպության մասին նշումները, որոնք առկա են Պայմանագրի հավելված 1-ում: 13.06.2018թ. ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին ծանուցել է թերությունների մասին և 19.06.2018թ. ստացել է գրություն՝ ծանուցմամբ ներկայացված անհամապատասխանությունը Ընկերության կողմից ոչ հիմնավոր գնահատելու մասին:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի «ա» ենթակետը 21.06.2018թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 2.1.7.1 ենթակետով սահմանվել է, որ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

Այսպես ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի և «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի միջև 21.05.2018թ. կնքված «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/6/5» ծածկագրով գնման պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ փոշի տոներները նախատեսվել է մատակարարել ***10 կգ-ոց պոլիէթիլենե փոպրակներով գործարանային փաթեթավորմամբ՝ 2-ական դրված ստվարաթղթե արկղերի մեջ:*** Ընդ որում Xerox և Lexmark տպիչների համար նախատեսված փոշի տոները՝ ընդհանուր 40 կգ (2 արկղ), իսկ HP և Canon տպիչների համար նախատեսված փոշի տոները՝ ընդհանուրը 100 կգ, (5 արկղ): Մինչդեռ Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 01.06.2018թ. էլեկտրոնային

պատվերի մեջ, որպես մատակարարման ենթակա պահանջվող քանակ, ***նշել է 10-ական կգ փոշի տոներ*** յուրաքանչյուր չափաբաժնի մասով: Տվյալ դեպքում ուսումնասիրելով Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջները և համեմատելով «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքի հետ, արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից ի սկզբանե պահանջվել է մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքի քանակին և փաթեթավորմանը ներկայացվող պայմաններից տարբերվող պայմաններով ապրանք, քանի որ Պայմանագրի համաձայն՝ պոլիէթիլենե տոպրակներով գործարանային փաթեթավորմամբ 10 կգ-անոց փոշի տոներները պետք է մատակարարվեին 2-ական դրված ստվարաթղթե արկղերի մեջ: Ընդ որում՝ տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջները վերաբերում են ոչ թե պոլիէթիլենե տոպրակներով 10 կգ-անոց փոշի տոներներին առանձին վերցրած, այլ ստվարաթղթե արկղերի մեջ 2-ական դրված 10 կգ-անոց փոշի տոներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Տվյալ դեպքում գտնում եմ, որ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքի՝ Պատվիրատուի կողմից «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/6/5» ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրին անհամապատասխան լինելու փաստը արձանագրելը չի հանդիսանում «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների անպատշաճ կատարելու հետևանք, քանի որ Պատվիրատուի կողմից ի սկզբանե պահանջվել է Պայմանագրի տեխնիկական բնութագրի պայմաններից տարբերվող պայմաններով ապրանք, հետևաբար նման պայմաններում բավարար հիմքեր առկա չեն «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի կողմից անպատշաճ որակի ապրանք մատակարարելու և պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման փաստն արձանագրելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.06.2018թ. թիվ 03/26-3/11426-18 գրությամբ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02242665) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**